

ԳԼՈՒԽ ԻԵ

Թեոդորոս տաղտկացեալ՝ կուզեր դառնալ Ռշտունիք, երբ իրեն իմացուցին թէ կաթողիկոսը թողեր աթոռը վեախեր Էր Տայոց գաւառը Սմբատ Կիւրապաղատին հետ: Այս երկու նախաթոռ անձինք Յայաստանի ծանր վիճակին մէջ ոչ միայն կը թողուին իրենց աթոռը, այլեւ համբաւ մը կը ձգէին, որ Թեոդորոսի երկիւղէն Էր իրենց փախուստը, իբր թէ դաւաճանութիւն մը կար իրենց անձանց դէմ: Վասնզի կաթողիկոսը նոյն գիշեր, որ կը հեռանար, կնքեալ թուղթ մը կ'ուտար իւր հաւատարիմ վարդապետի մը, ուր դառն գանգատներ կ'ընէր ընդդէմ զօրավարին: Միւս կողմէն կ'իմանար Թեոդորոս թէ յունաց բանակն, որ ի Կարին Էր՝ կը տարածուէր Բագրեւանդ եւ քիիքիէ առաջ անցնելով, կը մօտենար մայրաքաղաքին: Ուստի չկարենալով հեռանալ հայրարատայ, տեղապահ մը սահմանեց կաթողիկոսին եւ գրեց Սէթայի օգնական զօրաց գունդ իրեն հասցնել:

Իսկ Ռշտունեաց Տիկինը շուտ մը երկու հազար հետեւակ եւ երեք հարիւր հեծեալ ու Վարդ որդին յուղարկեց Տայոց զօրավարին: Թեպէտ Վարդ շատ դժկամակ Էր Ռշտունեաց Ոստանէն հեռանալու եւ ականայ հնազանդեցաւ մօրը: Ի՞նչ Էր պատճառն այս դժկամակութեան, ետ դառնանք երկու տարուան միշոց՝ երթանք Ռշտունիք եւ բացատրենք համառօտիւ:

Երբ Գրիգոր յաղթութեամբ ետ դարձաւ Յերաց կ'ողմերէն, զսէթայ եւ բոչոր երկիրը շփոթած ու տխուր վիճակի մէջ գտաւ: Վասնզի մինչ ամենքը կը սպասէին իշխանին դարձին, Թումայի դաւաճանութեան եւ Թեոդորոսի շղթայակապ ի Բիւզանդիոն յուղարկուելուն լուրը կը հասներ Վասպուրական, եւ անմիջապէս այն թղթի կտորը իշխանէն, որ կը պատուիրէր Սէթայի՝ «Յսկել երկրին եւ Ատոմ Շահունիէ գատ ոչ ումէք հաւատարմութիւն ընել»: Բայց դժբախտութիւն մ'էլ այն Էր Սէթայի վիճակին համար, որ Ատոմ կաթուածահար պառկած՝ իւր ամրոցն ի Բզնունիս, Վարդ դէռ Սիւնեաց երկիրն Էր: Ուստի երբ Գրիգոր հասաւ իւր յաղթական գնդաւ, Տիկինն իրեն լաւ ընդունելութիւն ըրաւ, վիճակը յայտնեց եւ բոլոր պատերազմական գործերն իրեն յանձնեց թէ՛ զօրաց կրթութեան, թէ՛ սոցայ թիւն աւելցնելու եւ թէ՛ բերդերն ամրացնելու մասին:

Վասպուրականի բոլոր նաւերը գնեց եւ փոքրիկ ծովուն տէր դարձաւ, եւ Աղթամարայ կղզին, որ այն ժամանակ շատ աւելի ընդարձակ Էր՝ վասնզի ծովը հիմկու բարձրութիւնն չունէր՝ շտեմարաններն ընդարձակեց ու մեծ բանակութեամբ պաշար եւ զէնք համբարեց: Դիտելով Գրիգորի անխոնջ